## ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հուլիսի 6-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ ճեմարանի 2004-2005 ուսումնական տարվա փակման հանդիսությունը: Ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ճեմարանի դասախոսներ և ծնողներ:

Բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի դասախոս Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը: Տեսչական ամենամյա զեկույցը ներկայացրեց ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը, իսկ ուսման մեջ առաջադիմություն ցուցաբերած սաները պարգևատրվեցին «Կայծակյան» հիմնադրամի և Վեհափառ Հայրապետի կողմից տրված նվերներով:

Հանդիսությունը եզրափակվեց Նորին Սրբության օրհնության խոսքով, որում Վեհափառ Հայրապետը մասնավորաբար նշեց. «...Մեր կյանքով, մեր գործով պիտի պայմանավորենք սերը մեր ժողովրդի դեպի մեր Եկեղեցին, հարգանքը մեր ժողովրդի՝ դեպի հայ եկեղեցականը: Հպարտ կարող ենք լինել մեր ժողովրդի փառավոր ոգով, մեր ժողովրդի նախանձախնդրության ոգով դեպի ազգային մեր արժեքները, դեպի ազգային մեր սրբությունները: Պարզապես եթե թերացումներ կան, ապա այդ թերացումների մեծ բաժինը մենք պետք է գիտակցենք որպես մեր թերացումներ:

...Ես վստահ եմ, որ մեր առաքելության մեջ մենք կհաջողենք, եթե սեր ունենանք, սեր մեր Եկեղեցու նկատմամբ, սեր մեր Հայրենիքի, մեր Ազգի նկատմամբ, սեր Աստծու նկատմամբ, սեր հոգևոր մեր առաքելության նկատմամբ: Սերն այն ուժն է, որ հրաշքներ կարող է իրագործել մեր կյանքում: Սերը հոգի կարող է կերտել, կամք ամրացնել մեր մեջ, որպեսզի չտկարանանք, չվհատվենք դժվարությունների առջև և մեր հայացքը նոր ժամանակներին հառած՝ իրականացնենք մեր առաքելությունը»:

Ցերեկույթի ընթացքում շարականների ու երգերի հոգեթով կատարմամբ հանդես եկան նաև ճեմարանի սաները:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*